

էս աշխարհը արունքտէր է ոչ գութ ունի, ոչ խիղճ
ունի.
Է՛հ, աշխարհն էլ ցաւող չունի. մահացու է ու վերջ ունի.
Ու մեզի պէս հոգեղէն է. ու մեզի պէս մահկանացու.
մեր գերեզմանն ինքն է հիմի, ու գերեզման ինքն էլ
ունի:

Հազար ափսոս ծաղկունանցը, նազուկ լուսնին,—պի-
տի թռումին.
Մով ծովերը, մով սարերը սև ծխի պէս պիտի անցնին.
Վառ արեւը պիտի մարի, վառ աստղերուն հազար ափ-
սոս,
Հրեղէն ձին, բլրճուլ, մարալ, հէյվախ, պիտի մեռնին,
անցնին...

Թէ աշխարհը, թէ ամեն մարդ ծնաւ—եկաւ, մեռ-
նի—կ'երթայ.
Թէ անցորդ ենք, չարքաշ ճամբորդ, երեւմունի, փշի
վերայ.
Ո՞ւմ հարցնենք՝ մեզի ասէ,—էս երանգ է, թէ արթուն
բան.
Որ մենք եկանք, հիմի կ'երթանք.—խաբար չը կայ, խա-
բար չը կայ...

է՛յ, անցաւոր, ցաւի աշխարհ, ցաւդ բարձած մէկ-
մէկ կ'երթանք.
Ինչո՞ւ եկանք, ինչո՞ւ կ'երթանք... մեզ հարցրէք, մենք
խաբար տանք.
Ցաւերու տակ մեռանք, մեռանք. էրնէկ էնոր, որ չի
զգայ.
Հազար ափսոս, որ ծնուեր ենք. չը ծնուածին էրնէկ
կուտանք:

Ա՛խ, խոր կը զգամ, որ աշխարհում մարդն է մէնակ,
որ դարդ ունի.
Մարդու վէրքը, մարդու ցաւը ո՛չ տակ ունի, ո՛չ չափ
ունի.
Է՛յ, անցաւոր, անսիրտ աշխարհ, բեղի հազար երնէկ
կուտանք,
Որ չես զգայ քու մեծ վէրքը, որ տակ չունի, որ չափ
չունի:

Մեր խեղճ երգն է մէնակ ճարը անմխիթար սրտի
համար.
Մեր խեղճ երգն է քու մեծ վէրքի խոր մրմռուը, ու-
նայն աշխարհ.
Երազի պէս եկանք—կ'երթանք. երազի պէս դուն էլ
կ'երթաս.
Մարդուս կնանքն էլ ցաւիդ երգն է, մարդս երգ է,
երազ—աշխարհ...

Ա.Ի. ԻՍՍՀԱԿԵԱՆ